ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 35Ն-Լ «09» սեպտեմբերի 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետերով սահմանված դրույթները, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից ներկայացվող ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվների հաստատման գործընթացը կանոնակարգելու նպատակով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվների հաստատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վահրամ Գասպարյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

09.09.2019

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
9 սեպտեմբերի 2019թ. թիվ 35-Ա -Ա/ հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ

1.Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայությամբ գործող պետական ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ կազմակերպություն) ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվները (այսուհետ՝ նախահաշիվ) և դրանցում կատարվող փոփոխությունները կազմում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի հունվարի 30-ի թիվ 26-Ա հրամանով հաստատված օրինակելի ձևին և դրանց լրացման պահանջներին համապատասխան:

2. Սույն կարգի 1-ին կետով կազմված նախահաշիվները և դրանցում կատարվող փոփոխությունները նախարարություն են ներկայացվում կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված կարգով հաստատվելուց հետո՝ դրան կցելով հաստատող մարմնի որոշումը (տնօրենի հրամանի, կանոնադրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ կոլեգիալ կառավարման մարմնի որոշման արձանագրության պատճեները), իսկ նախահաշիվներում կատարվող փոփոխությունների դեպքում՝ նաև բացատրագիր-հիմնավորում:

3.Նախահաշիվը և դրանցում կատարվող փոփոխությունները նախարարություն մուտք լինելուց հետո, մակագրվում են տվյալ միջոցառման համար պատասխանատու սահմանված ստորաբաժանմանը և ֆինանսաբյուջետային վարչությանը: Պատասխանատու ստորաբաժանումը նախահաշիվը ստանալուց երեք աշխատանքային օրվա ընթացքում նախարարության ֆինանսաբյուջետային վարչությանն է տրամադրում է իր գրավոր եզրակացությունը նախահաշվի կամ դրանցում կատարվող փոփոխության վերաբերյալ (բացասական եզրակացության դեպքում՝ համապատասխան հիմնավորումներ):

4.Ֆինանսաբյուջետային վարչությունը սույն կարգի 3-րդ կետում նշված եզրակացությունն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում

է նախահաշիվը և դրանցում կատարվող փոփոխությունները, և դրանք հիմնավոր համարելու, համապատասխան պատասխանատու ստորաբաժանման դրական եզրակացության առկայության, ինչպես նաև սույն կարգի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանելու դեպքում նախահաշիվը և դրանցում կատարվող փոփոխությունները ներկայացնում է նախարարության գլխավոր քարտուղարի հաստատմանը՝ ապահովելով կատարողի, ֆինասաբյուջետային վարչության համապատասխան բաժնի պետի, ֆինասաբյուջետային վարչության պետի և նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալի ստորագրությունները՝ նախահաշվի թղթային տարբերակի դարձերեսին:

5. Ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվները և դրանցում կատարվող փոփոխությունները սույն կարգի 4-րդ կետով սահմանված կարգով հաստատվելուց հետո կազմակերպության կողմից մուտքագրվում են «Client Treasury» էլեկտրոնային ծրագրային համակարգ, որոնք ֆինասաբյուջետային վարչության կողմից համադրվում են նախահաշիվների և դրանցում կատարվող փոփոխությունների արդեն իսկ հաստատված թղթային տարբերակի հետ և ստանում են էլեկտրոնային հաստատում: